

լապետութեան իւրոյ ժողովեցաւ ի յըշտեմարանս ամենայն սրբոց քաջ հովուապետաց :

Հինգերորդ՝ խաչատուր վարդապետն Երնջակեցի, ի գեղջէն Հուլսայ, առաջնորդն Ագուլեաց եւ աթոռակալ սրբոյն Թումայի առաքելոյն : Որ եւ սա նոր նորոգեալ սլայծառացոյց զաթոռն զայն չքեղապանձ վայելչութեամբ ի հիացունն կարգեալ տեսողաց, իրրեւ զգրախոս Աստուծոյ զարդարեալ ազգի ազգի ճոխութեամբ հոգեւորօք եւ մարմնաւորօք :

Սաչատուրոյ գործունէութեան մանր նկարագրութիւնը կու տայ Մարտիրոս գրիչ 1638ին Երեւանի Թ. 621 ձեռագրին մէջ, ուսկից յառաջ կը բերեմ հետեւեալ տողերը. «որոյ (Մովսիսի) գոլով աշակերտ եւ որդի հարազատ՝ դիեցեալ ի նմանէ կաթամբ բանիցն Աստուծոյ, տէրս իմ քաջ հոգետոր եւ աստուածաբան վարդապետս Սաչատուր, ստորոգիցեալս, որ եւ տեսուն իւրոյ հաւանական ընտրութեամբն եւ հրամանաւ նորին վարդապետական եւ եպիսկոպոսական իշխանութեամբ առաքեալ եղեւ ի գաւառս Նախէջեւանու եւ Գողթան, ի քաղաքս, ի գեղս եւ յաւանս յա՛ռս քարոզութեան բանի Տեառն : Եւ ոչ թէ վիճակի յաղազաւ, այլ զի ժամանակինչ աստուածաբան վարդապետութեամբն իւրով եւ ուղղափառ դաւանութեամբ կանգնեացէ զգլորեալսն եւ ուսուցէ նոցա